

ԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ

Ունկնդրեցին երեքն ալ վայելչագեղ գիտութեան
Գաղտնիքներուն՝ որ իրենց Սուրբ Մեսրոպէն կու գային.
Թրքքռացին դաշնօրէն մատներն անոնց լուսածին
Հայ բարբառի բազմալար քնարին վրայ ոսկեճայն:

Ընդելուգուած գոհարներ էին բառերը գոգցես
Մետաղին վրայ մտածման՝ ուր քոիչքն էր քարացած
Թռչուններու բոցաթեւ եւ ամպերու լուսամտ.
Կը գուշակուէր մութին մէջ երկինքներու դուռն անտես:

Քանի՜ ցայգեր լուսցուցին, քանի՜ ճրագներ լուսաթով
Շուքերն անոնց խնկարոյր երկարեցին խորհուրդով
Կամարներուն տակ վանքի մը ծովահարս գեղանի:

Եւ այսօր, երբ դեռ կը զգայ անհուն ծարաւն իր հոգւոյն
Մատեանին վրայ գլխահակ խարտեաշ հայկակ մը տծգոյն,
Վարդ մը անոնց մատներէն ծաղկած ընդմիշտ կ'արիւնի...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ